Պարույր Սևակ

Հրաժարվում եմ

Հրաժարվում եմ նախ՝ ի՛մ իսկ ձեռքից,
Եթե նա պիտի պոկի վիրակապ
Փակվել սկըսվող խորամուխ վերքից:
Հրաժարվում եմ օգնական զորքից,
Թե պիտի հետո նա չհեռանա
իմ երկրի խորքից:
Հրաժարվում եմ ա՛յն միակ արկից,
որ պատերազմի ելք չի որոշում,
Այլ միայն տասնյակ մարդկանց է հոշում:
Ա՛յն միակ զարկից,
որ և հերիք է,
Որպեսզի կրկին նոր կյանք ստանա
Մսրա Մելիքը.
Նաև ա՛յն բարկից,
Որ լոկ վառում է - չի տաքացընում,
Եվ ոչ թե թրծում, այլ ճաքեցընում:
Հրաժարվում եմ
Ինչից որ կուզեք՝
Նույնիսկ սեփական հպարտությունի՞ց:
Բայց ո՛չ թանկ նստող ճշմարտությունից:
Իսկ եթե հանկարծ անկարող լինեմ

Չհրաժարվել ճշմարտությունից
Թե կուրծքս չուզի, որ իր վանդակին գնդակներ խրվեն,
Թե վիզս չուզի պինդ օղակի մեջ մի կողքի ծռվել,
Թե մեջքս չուզի մայր հողի վրա դիտապաստ փռվել,-
տեսնելով, որ իմ կյանքը հատվում է՝
Իմացեք, ես է՛լ
Այդ պահին կասեմ.
-«Բայց այսուհանդերձ... նա պտըտվո՞ւմ է»...

06.VI.1957թ.
Մոսկվա